



# ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ՀԵՏԱԳՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ

## Հայտարարություն

### Երիտասարդ կադրերի հավաքագրման

Տնտեսական զարգացման և հետազոտությունների կենտրոնը (EDRC) հայտարարում է երիտասարդ կադրերի հավաքագրման փուլ՝ ավարտական կուրսի, մագիստրատուրայի ուսանողների, ասպիրանտների և երիտասարդ տնտեսագետների համար: Երիտասարդ կադրերի համար կազմակերպվելու են նեղ մասնագիտական դասընթացներ և աշխատանքային փորձաշրջան՝ ընդհանուր 4-6 ամիս տևողությամբ: Փորձաշրջանի ավարտից հետո լավագույն կադրերը աշխատանքի կտեղավորվեն Կենտրոնի կողմից իրականացվող ծրագրերում, որպես **հետազոտությունների օգնականներ**:

Տնտեսական զարգացման և հետազոտությունների կենտրոնը տնտեսական և սոցիալական հետազոտությունների և քաղաքականությունների գնահատման աշխատանքներում մասնագիտացված ոչ առևտրային, ոչ քաղաքական, անկախ ինստիտուտ է, որը հիմնադրվել է 2001 թվականին՝ Երևանում: ՏՀԿ առաքելությունն է նպաստել Հայաստանի զարգացմանը՝ անկախ և որակյալ հետազոտությունների, քաղաքականության առաջարկությունների և տեղեկատվության ապահովման միջոցով: ՏՀԿ-ն զբաղվում է տվյալների հավաքագրմամբ և վերլուծությամբ, իրականացնում է հետազոտություններ և գնահատումներ, մշակում է քաղաքականությունների վերաբերյալ առաջարկներ: Ստեղծված արդյունքները և գիտելիքը տարածում է իր ինտերնետային կայքի, տպագրվող նյութերի, «Տնտեսական քաղաքականություն և աղքատություն» ամսագրի և տեսանյութերի միջոցով, ինչպես նաև կազմակերպվող դասընթացների, աշխատանքային հանդիպումների և այլ միջոցներով: ՏՀԿ-ն մասնագիտացած է նաև վիճակագրական ընտրանքային հետազոտությունների ոլորտում: 2005-ից ի վեր իրականացրել է Հայաստանի ամբողջ տարածքի համար ներկայացուցչական 7 վիճակագրական ընտրանքային հետազոտություններ: Իրենց ծրագրերի իրականացումը ՏՀԿ կենտրոնին են վստահել մի շարք հեղինակավոր միջազգային կառույցներ և պետական կառավարման մարմիններ, ինչպիսիք են՝ ԱՄՆ ՄՉԳ, ՄԲԶԳ, ՄԱԿ-ի զարգացման ծրագրեր, Համաշխարհային բանկ, Ասիական զարգացման բանկ, ՀՄՀ-Հայաստան, Բեարինգ Փոինտ, Բարենց Գրուպ, Բուզ Ալլեն Համիլթոն, Էմերջինք Մարքեթս Գրուպ, Օքսֆամ ՄԲ, Նովիբ, Հայաստանի վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողության հիմնադրամ, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, ՀՀ Էկոնոմիկայի նախարարություն և այլն: Կենտրոնի մասին առավել մանրամասն տե՛ս [www.edrc.am](http://www.edrc.am) ինտերնետային կայքում:

#### Ներկայացվող հիմնական պահանջները՝

- տնտեսագետի որակավորում,
- Էկոնոմետրիկայի բավարար իմացություն,
- համակարգչային ծրագրերի իմացություն, որևէ վիճակագրական համակարգչային ծրագրի լավ իմացությունն առավելություն է,
- հայերենի վարժ տիրապետում, անգլերեն և ռուսերեն լեզուների լավ իմացությունն առավելություն է,
- նախկինում հետազոտական ծրագրերին մասնակցությունը առավելություն է, ինչպիսին է, օրինակ, հետազոտական հոդվածների պատրաստումը,
- լավ միջանձնական և թիմային հարաբերությունների հաստատման, ինչպես նաև ծանրաբեռնված աշխատելու ունակություն:

#### Ընտրությունը կկատարվի թեստավորման և անհատական հարցազրույցների արդյունքների հիման վրա:

Դիմորդները պետք է ներկայացնեն հիմնավորվածության նամակ (Letter of Motivation), որին կից պետք է լինի դիմորդի համառոտ ինքնակենսագրությունը (CV)՝ հայերեն և/կամ անգլերեն, ինչպես նաև դիպլոմի պատճեն կամ տեղեկանք նրանց համապատասխան համալսարանից (վերջինը վերաբերում է միայն ավարտական կուրսի ուսանողներին):

Դիմորդները իրենց դիմումները կարող են ներկայացնել տպագիր՝ առաքելով ՏՀԿ կենտրոնի գրասենյակ կամ էլեկտրոնային տեսքով՝ ուղղարկելով այն էլ. փոստով: Դիմումների ընդունման վերջնաժամկետը **2009 թվականի Ապրիլի 15-ն է**: Մանրամասների համար խնդրում ենք դիմել ՏՀԿ գործադիր տնօրեն Սուսաննա Սարգսյանին, կամ ազմինիստրատիվ օգնական Նուրե Զոհրաբյանին:

#### *Կոնտակտային տվյալներ:*

Տնտեսական զարգացման և հետազոտությունների կենտրոն (ՏՀԿ)

Երևան 0038, Աբեյան փ. 6/1, "IT PARK" բիզնես կենտրոն

Հեռախոս/ֆաքս՝ (+374 10) 397365, 540289

Էլ. փոստ՝ [info@edrc.am](mailto:info@edrc.am), URL: [www.edrc.am](http://www.edrc.am)